Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Գերմանիայի մասնաճյուղի հայտարարությունը 2020թ. հուլիսի 23-ին Բեռլինում՝ Գերմանիայում Հայաստանի Հանրապետության դեսպանատան առջև, ենթադրյալ հրկիզման վերաբերյալ

Բեռլին, 2020թ. հուլիսի 23

2020թ. հուլիսի 22 լույս 23-ի գիշերը՝ ժամը 00:20-ին, Բեռլինում՝ Գերմանիայում Հայաստանի Հանրապետության դեսպանատան դարպասներից դուրս, ենթադրաբար հրկիզվել է դեսպանատանը պատկանող մի ավտոմեքենա: Հրդեհի արդյունքում Հայաստանի Հանրապետության 0-169 դիվանագիտական պետհամարանիշը կրող ավտոմեքենան ամբողջովին այրվել է: Բարեբախտաբար ոչ ոք չի վնասվել: Քանի որ սա դեսպանատան մեքենա էր, գործի հետագա հետաքննությունն ստանձնել է Երկրամասային քրեական ծառայության ոստիկանական պետական պաշտպանության ծառայությունը և քննում է հրդեհի պատճառները Հակահրդեհային հանձնաժողովի հետ միասին:

ՀԲԸՄ-ի Գերմանիայի մասնաճյուղը Հայաստանի դեսպանատան մոտ հրդեհի հետևում քաղաքական դրդապատճառ է ենթադրում: Հաշվի առնելով Թուրքիայի և Արդբեջանի նախագահների վերջին շաբաթների ագրեսիվ հռետորաբանությունը՝ ռասսիստական, հակահայկական դրդապատճառը շատ հնարավոր է: Ինչպես Ռեջեփ Թայիփ Էրդողանը, այնպես էլ Իլհամ Ալիևը ինտենսիվացրել են իրենց քարոզարշավները հայերի և ընդհանուր առմամբ քրիստոնյաների դեմ, ինչպես հստակ ցույց է տալիս հուլիսի 24-ին Ստամբուլի Սուրբ Սոֆիայի տաճարը մզկիթի վերածելը:

Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում վերջերս փողոց էին դուրս եկել մի քանի տասնյակ հազարավոր ցուցարարներ՝ պահանջելով Հարավային Կովկասում լարված իրավիճակը վերածել պատերազմի՝ ընդդեմ հարևան Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների: Մասնավորապես, Ադրբեջանի Հանրապետության Պաշտպանության նախարարության կողմից ակնհայտորեն ընդդեմ հայերի ձևակերպված սպառնալիքը, որում Հայաստանի Մեծամորի ատոմակայանը նշվում էր իբրև հարձակման թիրախ, լուսաբանվեց մի շարք լրատվամիջոցների կողմից ու դատապարտվեց միջազգային հանրության կողմից:

ՀԲԸՄ-ի Գերմանիայի մասնաճյուղը կապի մեջ է հետաքննող մարմինների հետ և ակնկալում է հնարավորինս շուտ պարզաբանում իրադարձությունների ընթացքի վերաբերյալ: Եթե քաղաքական դրդապատճառը հաստատվի, ինչպես գերմանական կառավարությունը, այնպես էլ հանրությունը պետք է անմիջապես դատապարտեն հրկիզումը:

ՀԲԸՄ-ի Գերմանիայի մասնաճյուղը Նյու Յորքի Հայկական բարեգործական ընդհանուր միության՝ աշխարհում հայկական ամենամեծ բարեգործական կազմակերպության գերմանական ներկայացուցչությունն է՝ հիմնված Բեռլինում:

www.agbugermany.org

Աղբյուրներ՝

- https://www.berlin.de/polizei/polizeimeldungen/pressemitteilung.964529.php
- https://m.tagesspiegel.de/berlin/polizei-justiz/polizeimeldungen-aus-berlin-und-brandenburg-wagen-der-armenischen-botschaft-angezuendet-totalschaden/25616846.html
- https://germany.mfa.am/de/news/2020/07/23/fahrzeugbrand/8279
- https://www.facebook.com/botschaftderrepublikarmenien